«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ
Ա.Վ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
«05» հոկտեմբերի 2020թ

ԿԱՐԾԻՔ
առաջատար կազմակերպության

Լիդա Արմենի Մնացականյանի «Բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգի զարգացումը (ՀՀ օրինակով)» թեմայով, Ը.00.03 «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» և «Բանկային գործի և ապահովագրության» ամբոնների համատեղ նիստում: Նիստին ներկա էին՝ «Ֆինանսներ» ամբիոնի վարիչ, տ.գ.դ պրոֆեսոր Ա.Բ.Սալնազարյանը (նախագահող), «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Ա.Մարդոյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Մաթևոսյանը, տ.գ.թ., դոցենտ Է.Աղաբեկյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Մխիթարյանը (գրախոսող), տ.գ.թ., դոցենտ Ս.Պողոսյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Ներսիսյանը, տ.գ.թ., դոցենտ Կ.Միքայելյանը, տ.գ.թ., դոցենտ Վ.Բաղդասարյանը, տ.գ.թ., դոցենտ Ռ.Սահակյանը, տ.գ.թ., դոցենտ Ա.Սչանյանը, տ.գ.թ., դոցենտ Լ.Ղազարյանը, տ.գ.թ., ասիստենտ Գ.Հարությունյանը, տ.գ.թ., ասիստենտ Տ.Բեկթեմուրյանը, տ.գ.թ., ասիստենտ Հ.Սարգսյանը (գրախոսող), տ.գ.թ., ասիստենտ Կ.Ներսիսյանը, տ.գ.թ.,ասիստենտ Հ.Մուրադյանը, տ.գ.թ.,ասիստենտ Մ.Խաչատրյանը, տ.գ.թ.,ասիստենտ Ն.Սուղյանը, տ.գ.թ.,ասիստենտ Մ.Ասլանյանը, տ.գ.թ.,ասիստենտ Լ.Հարությունյանը, տ.գ.թ.,ասիստենտ Լ.Հովակնյանը, տ.գ.թ.,ասիստենտ Հ.Գրիգորյանը, տ.գ.թ.,ասիստենտ Ս.Իսրայելյանը, ասիստենտներ Ն.Բալասանյանը, Ա.Ավետիսյանը, ամբիոնի ավագ լաբորանտ Հ.Սաֆարյանը, ինչպես նաև ասպիրանտներ և հայցորդներ:

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Տնտեսավարման ներկա պայմաններում բանկային համակարգի հստակ գործողությունը, զարգացումն ու բարելավումը կանխորոշում են տնտեսության կայուն և դինամիկ աճը: Միևնույն ժամանակ, բանկային համակարգի առկա խնդիրները, իրացվելիության կրկնվող ճգնաժամերը տնտեսական ճգնաժամերի պատճառ են դառնում: Դա է պատճառը, որ ազգային բանկային համակարգի գործողության տեսական և գործնական ասպեկտները, արդյունավետ բանկային գործունեության հիմնահարցերը հետազոտվում են բազմաթիվ գիտնականների և մասնագետների կողմից:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո պարզ դարձավ, որ դրամավարկային քաղաքականության սովորական գործիքները բավարար չեն ֆինանսական ուժեղ ճգնաժամերը հաղթահարելու համար: Մինչ ճգնաժամը, շատ գործիչներ վստահ էին, որ ավանդների ապահովագրությունը, կապիտալի նվազագույն պահանջները և բանկային վերահսկողությունը կարող են հաջողությամբ զսպել ֆինանսական շուկաների անկայունությունը: Սակայն բազելյան ստանդարտները և բանկային կարգավորման բոլոր ազգային պրուդենցիալ մեխանիզմները պահպանում են բանկերի համար ֆինանսական բուրգեր ստեղծելու հնարավորությունը, այսինքն կարճաժամկետ պարտավորությունները և ցպահանջ պարտավորությունները կարող են օգտագործվել որպես ռեսուրսներ միջնաժամկետ եւ երկարաժամկետ վարկավորման համար:

Հետազոտության հեղինակը, որպես գիտական վերլուծության օբյեկտ, դիտարկում է բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգը, այդ թվում՝ պահուստային պահանջների քաղաքականությունը, որպես մակրոպրուդենցիալ գործիք, ինչպես նաև դրամավարկային քաղաքականության այլընտրանքային գործիք՝ ֆինանսական ցնցումները հարթելու նպատակով:

Հետազոտությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն տեսական առումով, այլև բանկային գործի ոլորտում աշխատող մասնագետների համար: Հետազոտության արդիականությունը կարևորվում է պահուստային պահանջների

քաղաքականությունը առաջարկվող փոփոխությունների անհրաժեշտության հետ կապված:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը ներկայումս երկրի ֆինանսական հատվածի առավել զարգացած բաղադրիչն է, սակայն իրացվելիության և բանկերի վճարունակության ռիսկերը նույնպես առկա են: Այսպիսով, հետազոտության թեմայի արդիականությունը որոշվում է Հայաստանի Հանրապետության բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգի զարգացման միջոցով, որի շնորհիվ էլ հնարավոր է լուծել նշված խնդիրները:

Ահա այդ առումով, գրախոսվող ատենախոսությունը ակնհայտորեն արդիական է և դրա կատարումը հրատապ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, գիտական նորույթը և կիրառական նշանակությունը

Աշխատանքի հիմնական նպատակը հետևյալն է՝ վերլուծել ՀՀ-ում պարտադիր պահուստավորման նորմատիվի գործող համակարգը, բացահայտել տվյալ գործիքի կիրառման հետ կապված հիմնական խնդիրները, ինչպես նաև մշակել բանկային պարտավորությունների պահուստավորման այլընտրանքային համակարգ, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել է նդիրների համապատասխան շրջանակ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններ բաժնից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Հեղինակն ատենախոսության ներածությունում հիմնավորում է ընտրված թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Պարտադիր պահուստավորման գործիքի դերն ու տեղը ժամանակակից աշխարհում» գլխում ներկայացվել են բանկային

պարտավորությունների պարտադիր պահուստավորման գործիքի տեսական և մեթոդաբանական հիմքերը, գործառույթները, իրականացվել է պահուստավորման նորմի գործիքի էության վերաբերյալ առկա հայացքների վերլուծություն, ինչպես նաև քննարկվել է պահուստային պահանջների քաղաքականության այլընտրանքային մոտեցումը:

Հետազոտության երկրորդ՝ «ժամանակակից ֆինանսական համակարգի վերլուծությունը պարտադիր պահուստավորման գործիքի կիրառման համատեքստում» գլխում վերլուծվել է զարգացած և զարգացող երկրներում պարտադիր պահուստավորման նորմատիվի կիրառման միջազգային փորձը, ինչպես նաև համաշխարհային ֆինանսական համակարգի վիճակը բանկային կարգավորման ոլորտում:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացում» գլխում իրականացվել է ՀՀ բանկային համակարգի, մասնավորապես, պահուստային պահանջների համակարգի, վերլուծություն, SVAR մոդելի կիրառմամբ իրականացվել է ՀՀ-ում գործող բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման ռեժիմի ազդեցության գնահատումը երկրի մակրոտնտեսական վիճակի վրա, ինչպես նաև մշակվել է բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացման այլընտրանքային մոտեցում:

Ատենախոսության արժանիքներից մեկն այն է, որ ստացված գիտական արդյունքներն ունեն տեսամեթոդական և գործնական նշանակություն և պարունակում են նաև նորույթ, որոնցից ատենախոսական աշխատանքում ներկայացվում են հետևյալները.

ա/ բացահայտվել են բանկային պարտավորությունների ՀՀ-ում գործող պարտադիր պահուստավորման ռեժիմի կիրառման բացասական հետևանքները, որոնք հանգեցնում են բանկային համակարգում արժութային և տոկոսային ռիսկերից առաջացող կորուստների, վարկավորման և ակտիվների եկամտաբերության ներուժի կրճատմանը, բանկերի պարտավորությունների և ակտիվների միջև ժամկետային անհամապատասխանելիության ռիսկի

առկայությանը, իրացվելիության կորստի անորոշության ռիսկի, արտարժույթի զուտ ներհոսքի կտրուկ նվազեցումից տնտեսության ֆինանսական հատվածը պաշտպանելու անկարողությանը,

բ/ կառուցվածքային ավտորեգրեսիոն վեկտորային մոդելի կիրառմամբ իրականացվել է ՀՀ-ում գործող բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման ռեժիմի՝ երկրի տնտեսության մակրոտնտեսական վիճակի վրա սահմանափակող ազդեցության գնահատումը,

գ/ մշակվել է բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի արդիականացման այլընտրանքային մոտեցում՝ հիմնված երկարաժամկետ ավանդների զրոյական պահուստավորման և կարճաժամկետ բանկային պարտավորությունների (մինչև 1 տարի ցպահանջ և ժամկետային հաշիվների) 100%-ի չափով պահուստավորման սկզբունքի վրա, անկախ ավանդների արժույթից:

դ/ իրականացվել է կարգավորիչ ազդեցության գնահատում (regulatory impact assessment) բանկային ավանդների կառուցվածքի և վարկային ներդրումների նկատմամբ ՀՀ-ում՝ բանկային պարտավորությունների պարտադիր պահուստավորման համակարգի նկատմամբ առաջարկվող մոտեցման իրականացման դեպքում:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող ատենախոսությունն, իր դրական արժանիքներով հանդերձ, ունի նաև որոշակի թերություններ, որոնցից կարելի է նշել հետևյալները.

1. Աշխատանքում հեղինակն ամբողջությամբ չի հետազոտել ՀՀ-ում պահուստավորման համակարգի զարգացման առանձնահատկությունները, այլ ընդամենը 20-25 էջի (էջեր՝ 102-124) սահմաններում ներկայացրել է ՀՀ օրինակը, որը, կարծում ենք, հետազոտության մասնակի իրականացում է: Վեր չեն հանվել ՀՀ բանկային համակարգի պահուստավորման և բանկերի կողմից թողարկած պարտատոմսերի առանձնահատկությունները, չի բացահայտվել բանկերի կողմից արժեթղթերի թողարկման հիմնական նշանակությունը:

2. Նորույթի 2-րդ կետում նշվում է, որ հիմնավորված է բանկային պարտադիր պահուստավորման՝ արժութային փոխարժեքի կայունության ապահովման գործիքի ոչ կայացած լինելը, ինչի հետ, մեր կարծիքով, այնքան էլ չի կարելի համաձայնել: Նախ, պարտադիր պահուստավորման նորմատիվը ԴՎՔ կարևորագույն գործիքներից մեկն է և ի սկզբանե նախատեսված չէ արժութային փոխարժեքի կայունության ապահովման համար: Ընդհակառակը՝ ՀՀ ԿԲ-ն սահմանել է նորմատիվային պահանջների կատարման այլ դաշտ, որը նախատեսված է հենց արժութային գործառնությունների սահմանափակման համար, ուստի պահուստավորումը կապել փոխարժեքի կայունության հետ և նշել, որ հիմնավորվել է ոչ կայացած լինելը, առնվազն հիմնավորված չէ:

3. Հետազոտության թեմայի վերնագրից բխող հիմնական ենթագլուխներում՝ 3.1 և 3.2, բավական աղքատ են օգտագործած գրականության վրա կատարված հղումները՝ նշվել է ընդամենը մեկ, երկու ՀՀ օրենք և ընդանրական ,,www.cba.am,, կայքը, չի նշվել անգամ կոնկրետ հղումը կամ պարբերականը, որի հիման վրա կատարվել է հետազոտությունը, որի խորը վերլուծությունն ըստ էության ավելի արժեքավոր կդարձներ հետազոտությունը և կհանգեցներ հետազոտության թեմայի վերնագրի և աշխատանքի բովանդակության համահունչ լինելուն:

4. Հեղինակի կողմից չի քննարկվել նաև հաջորդ կարևոր խնդիրը՝ կապված կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների շրջանակում պետական աջակցության ծրագրերով ներգրավված միջոցների՝ պարտադիր պահուստավորման ենթակա չլինելու հանգամանը (ՀՀ ԿԲ 12.06.2020թ. թիվ 92-Ն որոշում): Ցանկալի կլիներ, որ ներկայացվեին նաև ՀՀ Կառավարության կողմից իրակացվող միջոցառումների շրջանակում տրամադրված միջոցների վերլուծությունը և տրվեր դրանց ազդեցության գնահատականը:

5. Ատենախոսությունում առկա են նաև տեխնիկական վրիպակներ և թերացումներ, մասնավորապես՝ ա/ ներածության մեջ նշվել է, որ աշխատանքը շարադրված է 140 էջի վրա՝ առանց հավելվածների, այնինչ աշխատանքն առանց հավելվածների 151 էջ է, բ/ օգտագործած գրականությունը պատշաճ ձևով չի կազմված՝ չեն նշվել ՀՀ օրենքների ընդունման ամսաթվերը, օգտագործած

պարբերականների համարները, տարեթվերը, օգտագործած օտարալեզու գրականությունների, պարբերականների համարները չեն նշվել, չի նշվել որոշ դեպքերում, թե օգտագործած գրականությունը քանի էջից է բաղկացած և այլն, գ/ աշխատանքի մեջ հղումները որոշ դեպքերում կազմված են ոչ պատշաճ եղանակով՝ օրինակ, եթե կոնկրետ օգտվել է որևէ էլ. կայքից, կոնկրետ հղում չի տրվել, այլ նշվել է ընդհանրական www.cba.am կամ www.imf.org բուն մայր էլ. կայքը, որը ճիշտ չէ, դ/ հավելվածներում առկա ցուցանիշների, բանաձևերի, աղյուսակների և գծապատկերների հղումները բացակայում են և հստակ չէ, թե որտեղից են այդ տեղեկությունները վերցված և այլն:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները սկզբունքորեն չեն անդրադառնում ատենախոսության արժանիքների և արդյունքների վրա:

Աշխատանքն արժանավորվում է տրամաբանական կառուցվածքով և բազմաթիվ վերլուծություններով: Նկատվում է, որ հեղինակն ուսումնասիրել է առաջարկված հիմնախնդիրներին վերաբերող բազմատեսակ հայեցակարգեր և մոտեցումներ:

Լիդա Արմենի Մնացականյանի ատենախոսությունն ինքնուրույն ու ամբողջական, գիտական բարձր մակարդակով կատարված հետազոտություն է և արված առաջարկությունները կարող են էական դեր ունենալ Բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգի արդիականացման գործում:

Հետազոտության խնդիրների և ստացված արդյունքների հիմնադրույթներն արտացոլված են ատենախոսության սեղմագրում և հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում:

Լիդա Արմենի Մնացականյանի «Բանկային պարտավորությունների պահուստավորման համակարգի զարգացումը (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է

տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսներ» և «Բանկային գործի և ապահովագրության» ամբիոնների համատեղ նիստում 01.10.2020թ (արձանագրություն թիվ 2):

ՀՊՏՀ «ֆինանսներ» ամբիոնի վարիչ,
տ.գ.դ., պրոֆեսոր Ա.Բ.Սալնազարյան

ՀՊՏՀ «Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ., դոցենտ Ա.Վ.Մարդոյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ա.Ս.Մխիթարյան

«Բանկային գործի և ապահովագրության»
ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Հ.Ա.Սարգսյան

Ա.Բ. Սալնազարյանի, Ա.Վ.Մարդոյանի, Ա.Ս.Մխիթարյանի և Հ.Ա.Սարգսյանի ստորագրությունները հաստատում եմ՝

ՀՊՏՀ գիտքարտուղար Ն.Հ.Դարբինյան

05.10.2020